

2020 – 2021 ուսումնական տարվա մաթեմատիկայի ֆլեշմոբի առաջադրանքները կազմել են «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի 2-3-րդ դասարանների դասվարները, փաթեթը հավաքել է «Իմացումի հրճվանք» 2-3-րդ դասարանների ղեկավարների լաբորատորիայի ղեկավար Մանուշակ Աբրահամյանը: Այն նախատեսված է 2-3-րդ դասարանների սովորողների համար: Փաթեթը փորձարկվել է՝ կրթահամալիրում իրականացվող ամենամայա ֆլեշմոբերի միջոցով:

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԼԵՇՄՈԲԻ ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

2020-2021 ուսումնական տարի

Օգոստոս 2020


1. Ծիծեռնակը և մանգաղաթևը միասին կշռում են 56 գրամ: Մանգաղաթևը 20 գրամով ծանր է ծիծեռնակից: Քանի՞ գրամ է կշռում Մանգաղաթևը:



2. Արագիլը, գորտ ուտելով, գնում է տուն: Արագիլի համար ընտրիր այնպիսի ճանապարհ, որ հնարավորինս շատ գորտ ուտի (հետ դառնալ չի թույլատրվում): Ամենաշատը քանի՞ գորտ կարող է ուտել Արագիլը:



3. Անտառային հրդեհից կենդանիներին փրկելու համար նրանց գնացքով տեղափոխեցին: Գնացքը մեկ ուղերթով կարող է տեղափոխել կա՛մ 5 փիղ, կա՛մ 7 ընձուղտ: Գնացքը օրվա ընթացքում կատարել է 6 ուղերթ և տեղափոխել 34 կենդանի: Քանի՞ փիղ է տեղափոխել գնացքը:
4. Կլուն զգուշացնում է վտանգի մասին հարևան երկու կլուններին (տես նկար): Հարևաններից յուրաքանչյուրն էլ՝ իր հարևան երկու կլուններին: Քանի՞ կլուն կլիմանա վտանգի մասին 6 քայլ հետո:



5. Վահեն և իր լողորդ ընկերները գումարեցին իրենց ծննդյան օրը և ամսվա համարը (հունվարն առաջին ամիսն է, դեկտեմբերը՝ տասներկուերորդը) և ստացան 35: Նրանց բոլորի ծննդյան ամիսները տարբեր են: Վահեի հետ ամենաշատը քանի՞ ընկեր կարող էր լինել:

6. Բոլոր «արևների» տակ նույն թիվն է: Ո՞րն է այդ թիվը:

$$\text{☀} + \text{☀} + \text{☀} + 6 = \text{☀} + \text{☀} + \text{☀} + \text{☀} + \text{☀}$$

7. Քանի՞ շաբաթ կանի  $60 \cdot 60 \cdot 24 \cdot 21$  վայրկյանը:

8. Քանի՞ մանգաղաթն պիտի ավելանա, որ մանգաղաթների քանակը երեք անգամ ավելի լինի մյուս թռչունների քանակից:



9. Նունեն թեստ է հանձնում և սկզբնական ունի 10 միավոր: Ընդամենը կա 10 հարց, ճիշտ պատասխանի համար գումարվում է մեկ միավոր, սխալի համար հանվում է մեկ միավոր: Նունեն հավաքեց 14 միավոր: Քանի՞ հարցի էր ճիշտ պատասխանել Նունեն:

10. Արագիլը մեկ րոպեում կատարում է 10 քայլ և երեք րոպե հանգստանում է: Քանի՞ րոպե հետո Արագիլը կկատարի 60 քայլ:


### Մեպտեմբեր 2020

1. Եթե հայերենի այբուբենը հակառակ հերթականությամբ (Ֆ-ից ա) գրենք, ո՞ր տառը կլինի 11-րդը:

2. Սկյուռը ձմռան համար պահեստավորել էր երկու անգամ ավելի շատ կաղին, քան սունկ: Երբ նա էլի 8 սունկ բերեց, սունկերի ու կաղիների քանակը հավասարվեց: Սկյուռը քանի՞ կաղին էր պահեստավորել:



3. Մեպտեմբերի 10-րդ օրը հինգշաբթի է. շաբաթվա ի՞նչ օր կլինի ամսվա 28-րդ օրը:
4. Լիան իր մտապահած թիվը բաժանեց 7-ի, ավելացրեց 7, մեծացրեց 7 անգամ, ստացավ 77: Ո՞ր թիվն էր մտապահել Լիան:
5. Նարեն իր հորինած հեքիաթներից էլեկտրոնային գիրք ստեղծեց: Քանի՞ էջ ուներ գիրքը, եթե էջերը համարակալելու համար 35 թվանշան օգտագործեց:
6. « $1+2+3+4+5+6+7+8+9$ » արտահայտության մեջ գումարման նշաններից մեկը փոխարինիր բազմապատկման նշանով այնպես, որ արտահայտության արժեքը ստացվի 100:
7. Տատիկի ու թոռնիկի տարիքների գումարը 65 է: Քանի՞ տարեկան է նրանցից յուրաքանչյուրը, եթե գիտենք, որ թոռնիկն այնքան ամսական է, որքան տատիկի տարիքն է:
8. Տանը, որտեղ ապրում է կատուն, կա վեց սենյակ: Կատուն կարող է քայլել նշված սլաքների ուղղությամբ: Քանի՞ տարբեր ճանապարհներով նա կհասնի այն սենյակը, որտեղ դրված է ամանով կաթը:



9. Ճամփորդության ընթացքում Լիլին տուփի մեջ 5 հատ խաչսարդ ու բզեզ էր հավաքել: Քանի՞ խաչսարդ և քանի՞ բզեզ էր հավաքել Լիլին, եթե 34 ոտք էր երևում (մեկ խաչսարդը ունի 8 ոտք, իսկ մեկ բզեզը՝ վեց ոտք):



10. Հինգ ընկերուհիները հաղթահարեցին Թեժառույթի վանքի բարձունքը: Աննան Լիայից ավելի շուտ հասավ, բայց Մանեից՝ ուշ: Մոնիկան Եվայից ավելի շուտ հասավ, բայց Լիայից՝ ուշ: Ընկերուհիներից ո՞վ վերջինը հաղթահարեց բարձունքը:

### Հոկտեմբեր 2020

1. Սովորողները նկարում էին Աթաբեկ Խնկոյանի հեքիաթները՝ «Ագռավն ու աղվեսը», «Ճպուռն ու մրջյունը», «Մկների ժողովը» և «Փեսացու մուկը»: Դասարանում 22 սովորող կար: Նրանց կեսը նկարում էր «Ագռավն ու աղվեսը», մյուս կեսից հինգը՝ «Ճպուռն ու մրջյունը», իսկ մնացածի կեսը՝ «Մկների ժողովը»: Քանի՞ հոգի էր նկարում «Փեսացու մուկը»:



2. Արփին ճաշի համար աղցան պատրաստեց: Մեկ բաժին աղցանի համար պետք է 3 լոլիկ, 2 վարունգ, 1 պղպեղ: Քանի՞ լոլիկ, վարունգ և պղպեղ օգտագործեց Արփին 8 բաժին աղցան պատրաստելու համար:



3. Պարկում կա 8 կարմիր, 4 դեղին և 11 կանաչ գնդակ: Առանց պարկի մեջ նայելու՝ ամենաքիչը քանի՞ գնդակ պետք է այնտեղից հանել, որ հանածներից գոնե մեկը դեղին լինի:



4. Տարբեր թվանշաններով գրվող ամենափոքր քառանիշ թվի հարյուրավորների կարգում ի՞նչ թվանշան է գրված:
5. Մեկ մուտք ունեցող բազմահարկ շենքի յուրաքանչյուր հարկում կա չորս բնակարան: Ո՞ր հարկում է 49-րդ բնակարանը, եթե բնակարանների համարակալումը սկսվում է առաջին հարկից՝ 1 համարով:



6. Մտապահած թվի կրկնապատիկին գումարեցին 6 և ստացան 90: Ո՞ր թիվն էին մտապահել:



7. Ագարակում ձմռանը նախապատրաստվելիս ձիերի համար գնեցին 76 տուկ խոտ: Տուկերը համարակալեցին. ամեն մեկի վրա փակցրեցին համապատասխան համարը: Քանի՞ անգամ օգտագործեցին 7 թվանշանը:
8. Պարտեզապուրակային աշխատանքից հետո տղաները հոգնել էին: Նրանք դպրոցի հյուրատանը երեկոյան՝ ժամը ութին, պառկեցին՝ քնելու: Տղաներից մեկը նախապես լարեց զարթուցիչը՝ հաջորդ օրը՝ առավոտյան՝ ժամը տասին արթնանալու և գործը շարունակելու համար: Քանի՞ ժամ կհասցնեն քնել տղաները, մինչև զարթուցիչն արթնացնի նրանց:
9. Օգտագործելով թվաբանական գործողության նշանները՝ հինգ մեկերի միջոցով ստացեք 100:

10. 2020 տարեթվի գրության մեջ օգտագործվում է իրարից տարբեր երկու թվանշան՝ գրոն և երկուսը: Հաջորդը  $n$  ը տարեթիվն է, որի գրության մեջ նորից օգտագործվում են միայն գրո և երկու թվանշանները:

### Նույնքեր 2020

1. Գտիր օրինաչափությունը և հարցական նշանի փոխարեն գրիր անհրաժեշտ թիվը:

7	16	9
5	21	16
9	?	4

2. Քանի՞ տարբեր տառ ես օգտագործում «Մխիթար Սեբաստացի կրթահամալիր» գրելու համար: Միևնույն տառի մեծատառն ու փոքրատառը նույն տառն ենք հաշվում:
3. Ի՞նչ թիվ կգրի Լուսինեն հարցական նշանի վանդակում, երբ նկարում բերված բոլոր հաշվարկները ճիշտ կատարի:

				0		
				+		
2	+	1	=			
		+		=		
			-		=	?
		=				
		9				

4. Թթուղրիկի համար օգտագործվեց 30 կգ բանջարեղեն՝ կաղամբ, ծաղկակաղամբ, լոլիկ և վարունգ: Կաղամբն ու ծաղկակաղամբը միասին 15 կգ էր, լոլիկը՝ 10 կգ: Քանի՞ կիլոգրամ վարունգ օգտագործեցին:

5. Ագարակում կան սագեր ու ձիեր: Բոլորը միասին ունեն 44 ոտք և 14 գլուխ: Քանի՞ սագ և քանի՞ ձի կա ագարակում:
6. Չորս հատ երկուսով (2,2,2,2) և թվաբանական գործողության նշան օգտագործելով, ստացիր 111 :
7. Թթվի տարայում կա լոլիկ, վարունգ, գազար, ծաղկակաղամբ, բազուկ: Լոլիկը քիչ է վարունգից, բայց շատ է բազուկից: Գազարը քիչ է ծաղկակաղամբից, բայց շատ է վարունգից: Տարայում ո՞ր բանջարեղենն է ամենաքիչը:












8. Կրթահամալիրի տոնի առթիվ 20 սովորողներից յուրաքանչյուրը մի գծի երկայնքով տնկեց խաղողի մեկական վազ, ընդ որում մեկը մյուսից երկու մետր հեռավորությամբ: Որքա՞ն է առաջին և վերջին տունկերի հեռավորությունը:



9. 15 սովորողի հարիսա հյուրասիրելու համար անհրաժեշտ է 1 կիլոգրամ հավի միս և 2 կիլոգրամ ձավար: Քանի՞ կիլոգրամ հավի միս և քանի՞ կիլոգրամ ձավար է անհրաժեշտ 60 սովորողի հյուրասիրության համար:
10. Մեկ կախազարդն արժի 500 դրամ: Քանի՞ դրամ պետք է վճարի Մանեն, որպեսզի իր և երկու ընկերուհիների համար մեկական կախազարդ գնի:


**Դեկտեմբեր 2020**

1. Ձմեռ պապը իր բոլոր երեք զրքերը նվիրեց թոռնուհուն: Քանի՞ զիրք եղավ թոռնուհու մոտ, եթե մինչ նվեր ստանալը երկու զիրք ավել ուներ, քան Ձմեռ պապը:
2. Բլրի գագաթին 25 ճամբարական կար: Նրանք միաժամանակ 3 տեղանոց սահնակներով պետք է սահեին բլրից: Ամենաքիչը քանի՞ սահնակ պետք է լիներ բլրին:
3. Արմենը գրպանում միայն 50 և 100 դրամանոց մետաղադրամներ ուներ: Փուչիկ գնելու համար նա պետք է 100 դրամ վճարեր: Առանց նայելու՝ ամենաքիչը քանի՞ մետաղադրամ պետք է Արմենը գրպանից հաներ մեկ փուչիկ գնելու համար:
4. Ամանորյա միջոցառման ժամանակ տարեգաթան կիսեցին, հետո յուրաքանչյուր կտորը բաժանեցին 2 մասի: Ստացված ամեն մի մասը բաժանեցին 3 կտորի: Երբ յուրաքանչյուր երեխա մեկ կտոր վերցրեց, երկու կտոր ավելացավ: Քանի՞ երեխա էր մասնակցում միջոցառմանը:
5. 2020 թ.-ի Ձմեռ պապը հարյուր տարի հետո տոնելու է իր չորսհարյուրամյակը: Քանի՞ տարի առաջ է ծնվել Ձմեռ պապը:
6. Ձմեռ պապիկը Կարինեին, Գոհարին և Անուշին, ըստ իրենց ցանկության, նվիրեց մեկական խաղալիք՝ արջուկ, փղիկ և նապաստակ: Հայտնի էր, որ Կարինեն նապաստակով չէր խաղում, իսկ Անուշը չէր խաղում ո՛չ նապաստակով, ո՛չ արջուկով: Ի՞նչ խաղալիք ստացավ Գոհարը:
7. Ամանորյա առաջին ներկայացումը թատրոնում դեկտեմբերի 25-ին է, վերջին ներկայացումը՝ հունվարի 7-ին: Ամեն օր մեկ ներկայացում է լինելու: Քանի՞ ներկայացում է լինելու:
8. Տոնածառի խաղալիք գնելիս Լևոնը երկու անգամ ավելի շատ գումար ծախսեց, քան Գագիկը: Որքա՞ն գումար ծախսեց տղաներից յուրաքանչյուրը, եթե Գագիկը Լևոնից 1500 դրամով քիչ ծախսեց:
9. Տոնածառի լույսերի շղթայի լամպերը գունավորված են դեղին, կանաչ, կարմիր, կապույտ հերթականությամբ: Ի՞նչ գույնի է 52-րդ լամպը:
10. Ի՞նչ թիվ է թաքնված հարցականի փոխարեն:

	+		= 10
	+		= 14
	-		= 6
	+		= 14
	=	?	



1. Հյուսիսային դպրոցի տոնաձառը զարդարեցին կարմիր, դեղին և սպիտակ խաղալիքներով: Կարմիր խաղալիքները 20 հատ էին, դեղին խաղալիքները 5-ով պակաս էին կարմիր խաղալիքներից, իսկ սպիտակները՝ 8-ով ավել էին դեղիններից: Քանի՞ խաղալիք կար տոնաձառին:
2. Հյուսիսային դպրոցից մինչև կինո Հայաստան ճամբարականները քայլքով հասնում են 20 րոպեում, ֆիլմը սկսվում է ժամը՝ 12:30: Ճամբարականները ժամը քանիսի՞ն պետք է դուրս գան դպրոցից, որպեսզի չուշանան ֆիլմի դիտումից, եթե նախատեսել են 20 րոպեանոց կանգառ այգում:
3. Հունվարի 11-ը երկուշաբթի է: Շաբաթվա ի՞նչ օր կլինի հունվարի 28-ը:
4. Երեք կիլոգրամ այլուրից կարելի է թխել 50 միանման գաթա: Յոթ ու կես կիլոգրամ այլուրից քանի՞ այդպիսի գաթա կթխվի:
5. Գտիր օրինաչափությունը և նշիր հարցական նշանի փոխարեն թաքնված թիվը:



6. Դրմախաղի ժամանակ Գայանեն, Գևորգը, Տիգրանը և Էլլան միասին խաղաղացին 10 տարբեր խաղեր, որոնցից յուրաքանչյուրը խաղում էր մենակ: Ամենաշատ խաղերը Գայանեն խաղաց, իսկ ամենաքիչը՝ Էլլան: Տղաները միասին քանի՞ խաղ խաղացին:
7. Մարզական ստուգատեսին մասնակցելու համար Վարդանը հեծանվով Հյուսիսային դպրոցից Հարավային կամ Հարավային դպրոցից Հյուսիսային հասնում է 25 րոպեում: Քայլքով քանի՞ րոպեում կհասնի Հարավային դպրոցից Հյուսիսային դպրոց, եթե այդ նույն ճանապարհի վրա հեծանվով 2 անգամ ավելի քիչ ժամանակ է ծախսում, քան քայլելիս:
8. Դդումներ գնելու համար Կառլենն ուներ 1000 դրամ: Մեծ դդումն արժեր 200 դրամ, իսկ փոքր դդումը՝ 150 դրամ: Տաբեր չափերի ամենաշատը քանի՞ դդում կարող է գնել այդ գումարով:
9. Դրմագլոր խաղի համար Հյուսիսային դպրոցի երկու ջոկատներ դդումներ ունեին: Եթե առաջին ջոկատը 2 դդում փոխանցի մյուս ջոկատին, ապա իր մոտ կմնա 2 անգամ ավելի քիչ դդում, քան մյուս ջոկատում, իսկ եթե երկրորդ ջոկատը 2 դդում փոխանցի առաջինին, ապա երկու ջոկատներում կլինեն հավասար քանակությամբ դդումներ: Յուրաքանչյուր ջոկատ քանի՞ դդում ուներ:
10. Նարեն դդմային խաղեր խաղալու համար արկղով դդումներ բերեց դպրոց: Արկղում եղած դդումներից մեկական բաժանեց 4 ընկերներին, իսկ արկղի մեջ մնացած 2 դդումը իրեն վերցրեց: Նարեն քանի՞ դդում բերեց դպրոց:

## Փետրվար 2021

1. Տիգրանն ունի 4 խաղալիք՝ մեքենա, գնդակ, զինվոր և նավ: Նա ուզում է խաղալիքները մի շարքով դասավորել: Նաև ուզում է, որ մեքենան լինի նավի և զինվորի միջև: Քանի՞ եղանակով կարող է դասավորել խաղալիքները:
2. 15, 24, 32, 42, 53 թվերը գրելու համար իրարից տարբեր քանի՞ թվանշան են օգտագործել:
3. Ազարակում կա 6 շուն, 8 բադիկ, 4 սագ և մի քանի ձի: Քանի՞ ձի կա, եթե բոլոր կենդանիները միասին ունեն 68 ոտք:
4. Աշոտի կրիան արթուն ժամանակ մեկ ժամում ուտում է 5 տուփ խոտ: Երեկ նա քնեց 20 ժամ: Քանի՞ տուփ խոտ նա կերավ երեկ:
5. Բարեկենդանի տոնին ընդառաջ Արևմտյան դպրոցում տիկին Արևը և սովորողները գաթաներ թխեցին: Առաջին դասարանցիներին բաժին հասավ գաթաների կեսը: Երկրորդ դասարանցիներին հասավ մնացած գաթաների կեսը: Հետո երրորդ դասարանցիները վերցրեցին մնացած գաթաների կեսը, որից հետո մնաց 6 գաթա: Որքա՞ն գաթա էին թխել:
6. Սովորողները գրադարանից վերցրին Թումանյանի «Անբան Հուռին», «Սուտլիկ որսկանը», «Բարեկենդանը» և «Քաջ Նազարը» հեքիաթները: Արեգը կարդաց «Անբան Հուռին» և «Սուտլիկ որսկանը»: Աննան կարդաց «Բարեկենդանը»: Աշոտը կարդաց «Բարեկենդանը» և «Անբան Հուռին»: Ո՞ր հեքիաթը ոչ ոք չկարդաց:
7. Ռաֆայելն ու Հայկը միասին կշռում են 76կգ, իսկ Ռաֆայելն ու Մարկը միասին՝ 71կգ: Հայկը Մարկից քանի՞ կիլոգրամով է ծանր:
8. Ներկայացում դիտելու համար սովորողները 9:30 դպրոցից դուրս եկան: Ներկայացումը տևեց 50 րոպե, իսկ դպրոցից թատրոն և թատրոնից դպրոց ճանապարհին սովորողները ծախսեցին 60 րոպե: Ժամը քանիսի՞ն վերադարձան դպրոց:
9. Քանի՞ ձևով կարող են 10 ուլունքը շարել 4 թելի վրա, որ յուրաքանչյուր թելի վրա լինի կենտ թվով ուլունք:
10. Շարքով դրված էր 15 կոնֆետ: Արամը կերավ յուրաքանչյուր 4-րդը, հետո էլ Մաքսիմը կերավ մնացած կոնֆետներից յուրաքանչյուր 3-րդը: Ո՞վ ավելի շատ կոնֆետ կերավ: Շարքով դրված էր 15 կոնֆետ: Արամը կերավ յուրաքանչյուր 4-րդը, հետո էլ Մաքսիմը կերավ մնացած կոնֆետներից յուրաքանչյուր 3-րդը: Ո՞վ ավելի շատ կոնֆետ կերավ:

## Մարտ 2021

1. Դավիթը ծառերն էտելու համար 15 աստիճան ունեցող սանդուղք օգտագործեց: Նա կանգնեց մեջտեղի աստիճանին: Ո՞րերորդ աստիճանին կանգնեց Դավիթը:

2. Մոնիկան, Աննան և Եվան միասին նարգիզներ տնկեցին: Մոնիկայի և Աննայի տնկածները միասին 15-ն էին, իսկ Մոնիկայի և Եվայի տնկածները՝ 13-ը: Քանի՞ նարգիզ միասին տնկեցին աղջիկները, եթե Մոնիկան տնկեց 7 նարգիզ:
3. Ծաղկանոցը 5 մարգ ուներ: Երկրորդ մարգում 2-ով ավելի շատ կակաչ կար, քան առաջին մարգում, երրորդում՝ 2-ով ավելի շատ, քան երկրորդում, չորրորդում՝ 2-ով ավելի շատ, քան երրորդում, հինգերորդում՝ 2-ով ավելի շատ, քան չորրորդում: Քանի՞ կակաչ կար առաջին մարգում, եթե բոլոր մարգերում միասին 35 կակաչ կար:
4. Քանի՞ տարբեր տառ ես օգտագործում գարնան երեք ամիսների անունները գրելու համար:
5. Ռաֆայելն ու Եգորը նստած են գնացքի հարևան վագոններում: Ռաֆայելը, գնացքի սկզբից հաշվելիս, 5-րդ վագոնում է, իսկ Եգորը՝ վերջից հաշվելիս՝ 7-րդ: Քանի՞ վագոն ունի գնացքը: Դիտարկե՛ք բոլոր հնարավոր տարբերակները:
6. Երեսուն սովորողի չամչով փլավ հյուրասիրելու համար անհրաժեշտ է 3 կիլոգրամ բրինձ և կես կիլոգրամ չամիչ: Քանի՞ կիլոգրամ բրինձ և քանի՞ կիլոգրամ չամիչ է անհրաժեշտ 120 սովորողի հյուրասիրելու համար:
7. Տասնինը ծաղիկը դասավորեցին ձնծաղիկ, մանուշակ, ձնծաղիկ, մանուշակ, . . . հերթականությամբ: Շարքում ո՞ր ծաղկից ավելի շատ ստացվեց:
8. Ծաղկազարդի տոնին Լուսինեն և Կարինեն որոշեցին ընկերների համար եռագույն ճակտոցներ հյուսել: Քանի՞ տարբեր ճակտոց կստացվի, եթե նրանք ունեն կարմիր, կանաչ, դեղին, կապույտ թելեր:
9. Արվեստանոցում 20 կգ կավ կա: Մարտի 15-ից սկսած՝ օրական 3 կգ կավ օգտագործեցին: Մարտ ամսվա ո՞ր օրը կավը կվերջանա:
10. Կռահի՛ր օրինաչափությունն ու լրացրո՛ւ պակասող թիվը՝ 1, 1, 2, 3, 5, 8, 13, 21, 34, 55, \_\_\_ :

### Ապրիլ 2021

1. Ազարակում բադերն ու հավերը միասին 27-ն են: Հավերը բադերից 5-ով ավելի են: Քանի՞ բադ և քանի՞ հավ կա ազարակում:



2. Թութակներին կերակրելիս 2 տեսակի հատիկեղեն են տալիս: Ցորեն, գարի և կորեկ ունենալու դեպքում թութակների համար քանի՞ տարբեր ուտելիք կարելի է պատրաստել:



3. Մեղվի փեթակները 2 շարքով դասավորված են: Առաջին շարքից 4 փեթակ տեղափոխեցին երկրորդ շարք: Երկրորդ շարքում 12 փեթակ եղավ, իսկ առաջին շարքում՝ 8: Նախապես ամեն շարքում քանի՞ փեթակ կար:



4. Արևելյան և Արևմտյան դպրոցի սովորողները 3 շարք նարգիզ տնկեցին, ամեն շարքում՝ 5 հատ: Հարավային ու Հյուսիսային դպրոցի սովորողները 2 շարք քրիզանթեմ տնկեցին, ամեն շարքում՝ 8 հատ: Բոլոր սովորողները միասին քանի՞ ծաղիկ տնկեցին:



5. Ագարակի շների թաթերի քանակը 9-ով շատ է քթերի քանակից: Քանի՞ շուն կա ագարակում:
6. Արամը իր կանգնած տեղից հինգ քայլ արեց դեպի հյուսիս, երեք քայլ՝ դեպի արևելք, հինգ քայլ՝ դեպի հարավ և երեք քայլ՝ դեպի արևմուտք: Արամը իր սկզբնական կետից քանի՞ քայլ տեղափոխվեց:



7. Մայիսի 10-ը երկուշաբթի է: Շաբաթվա ի՞նչ օր կլինի մայիսի 28-ը:



8. Երեք միանման գերանները հավասար կտրելով՝ բակի համար աթոռներ սարքեցին: Քանի՞ աթոռ ստացվեց, եթե 15 անգամ սղոցեցին:

9. Տանձն ու խնձորը միասին կշռում են 300 գրամ, տանձը, խնձորը և նարինջը միասին՝ 450 գրամ, իսկ խնձորն ու նարինջը՝ 250 գրամ: Քանի՞ գրամ է կշռում մեկ տանձը:



10. Արևելքի լողորդները Արևմուտքի փակ լողավազան հասնելու համար յուրաքանչյուր 100 քայլից հետո հանգստանում էին: Քանի՞ քայլ կատարեցին լողավազան հասնելու համար, եթե 5-րդ հանգիստը եղավ լողավազանի հանդերձարանում:

### Մայիս 2021

1. Հյուսիսային դպրոցից մինչև Արատես ճամբարականները հասնում են 3 ժամ 10 րոպեում: Խումբը Արատեսում պետք է լիներ ժամը 12:30-ին: Ճամբարականները ժամը քանիսի՞ն պետք է դուրս գային դպրոցից, որպեսզի հասնեին ճիշտ ժամանակին:

2. Տնկիներ գնելու համար Անին ուներ 4000 դրամ: Մեծ տնկին արժեք 1000 դրամ, իսկ փոքրը՝ 500 դրամ: Անին երկու տեսակի տնկիներից էլ պետք է գնի: Ամենաշատը քանի՞ տնի կարող է գնել Անին այդ գումարով:
3. Հեծանվաուղին նշելու համար օգտագործել են դեղին և կարմիր դրոշակներ: Մեկնարկում երկու դրոշակներից էլ կար: Դրանից հետո ուղու աջ կողմում իրարից 20մ հեռավորության վրա տնկել են դեղին դրոշակներ, իսկ ձախ կողմում իրարից 30մ հեռավորության վրա տնկել են կարմիր դրոշակներ: Աշոտը իր անցած ճանապարհը հաշվում էր աջ կողմի դրոշակներով, իսկ Գուրգենը՝ ձախ: Ժամանակի ինչ-որ պահի Աշոտը հաշվեց 12 դրոշակ (չհաշված սկզբնակետին): Այդ պահին Գուրգենը քանի՞ դրոշակ էր հաշվել, եթե գտնվում էր Աշոտի կողքին:
4. Մարգատոնին 25 ճամբարական էր մասնակցում: Վազքի մրցմանը մասնակցում էին երկու կամ երեք հոգանոց խմբերով: Ամենաքիչը քանի՞ խումբ կազմվեց:
5. Սուրենը համակարգչային խաղ է ստեղծել: Երբ սեղմում ես կապույտ կոճակը, էկրանին գրված թիվը փոխարինվում է իրենից 5-ով մեծ թվով: Երբ սեղմում ես կարմիր կոճակը, էկրանին գրված թիվը փոխարինվում է իրենից 3-ով մեծ թվով: Սկզբում էկրանին գրված էր 0: Մի քանի քայլ հետո էկրանին երևաց 37: Հայտնի է, որ կապույտ կոճակը ավելի շատ են սեղմել, քան կարմիրը: Քանի՞ անգամ են սեղմել կապույտ կոճակը:
6. Տարեվերջյան ստուգատեսի ժամանակ սովորողները ցուցադրում էին իրենց հաշվելու կարողությունները: Միանիշ թիվը արտասանելու համար ծախսում են 1 վայրկյան, երկնիշ թիվը արտասանելու համար՝ 2 վայրկյան: Արամը սկսում է 2-ից և հաշվում է՝ մեկական ավելացնելով, Գոհարը սկսում է 10-ից և հաշվում է՝ երկուական ավելացնելով: Մինչև n թիվը կհաշվի Գոհարը, եթե այդ ընթացքում Արամը հաշվել էր մինչև 20-ը: Տարեվերջյան ստուգատեսի ժամանակ սովորողները ցուցադրում էին իրենց հաշվելու կարողությունները: Միանիշ թիվը արտասանելու համար ծախսում են 1 վայրկյան, երկնիշ թիվը արտասանելու համար՝ 2 վայրկյան: Արամը սկսում է 2-ից և հաշվում է՝ մեկական ավելացնելով, Գոհարը սկսում է 10-ից և հաշվում է՝ երկուական ավելացնելով: Մինչև n թիվը կհաշվի Գոհարը, եթե այդ ընթացքում Արամը հաշվել էր մինչև 20-ը:
7. Արմենը առավոտյան դպրոց եկավ 08:45-ին և դպրոցից դուրս եկավ 13:35-ին: Քանի՞ ժամ և քանի՞ րոպե է նա եղել դպրոցում:
8. Երեկ երեքշաբթի էր: 11 օր հետո շաբաթվա ի՞նչ օր կլինի:
9. Մարգախաղի ժամանակ առաջին դասարանցիները կարմիր շապիկով էին, բայց ուրիշ գույնի կիսավարտիքով էին: Երկրորդցիները կանաչ կիսավարտիքով էին և ուրիշ գույնի շապիկով: Ի՞նչ գույնի շապիկով էին երրորդ դասարանցիները, եթե թիմերից ոչ մեկի մոտ շապիկի և կիսավարտիքի գույները չէին համընկնում, և նշված գույներից բացի՝ օգտագործել են դեղին գույնը և ուրիշ էլ ոչ մի գույն:
10. Մայիսյան հավաքի ընթացքում հանդիպեցին Հյուսիսային և Հարավային դպրոցների ֆուտբոլային թիմերը: Մինչ խաղը երեք մրցավարները և թիմերի

ավագները ձեռքսեղմումներով իրար ողջունեցին: Ընդամենը քանի՞ ձեռքսեղմում եղավ:

### Հունիս 2021

1. Ճամբարականները որոշեցին ժամացույցի թվատախտակը երկու գծով բաժանել երեք մասի այնպես, որ յուրաքանչյուր մասում եղած չորս թվերի գումարները հավասար լինեն: Որո՞նք են ստացված քառյակները, եթե երկնիշ թվերի թվանշանները իրարից բաժանել չի կարելի:
2. Առավոտյան տողանին 25 ճամբարականներ շարվել էին մեկ շարքով: Յուրաքանչյուր տղայի երկու անմիջական հարևանները աղջիկներ էին: Աղջիկներից ոչ մեկը աղջիկ անմիջական հարևան չունեց: Քանի՞ աղջիկ կար շարքում:
3. Արամն ու Էրիկը լողափին խաղում էին քարերով: Արամը մեկ շարքով դասավորեց 8 քար՝ միմյանցից 2սմ հեռավորության վրա: Էրիկը 15 քարը դասավորեց 2-րդ շարքում՝ իրարից 1սմ հեռավորության վրա: Ո՞ւմ քարերի շարքն ավելի երկար ստացվեց :



4. Հունիսյան ճամբարի ընթացքում Արևմտյան դպրոցի ճամբարականները կազմակերպեցին ցատկապարկերով վազքի մրցույթ: Արեգը, Դավիթը և Ալենը գրավեցին առաջին երեք տեղերը: Արեգ գրավեց 2-րդ, Ալենը հասավ վերջնագծին Դավթից առաջ: Տղաներից ով ո՞ր տեղը գրավեց:



5. Արմենն ուներ դեղձանիկներ: Նա գնեց մի քանի վանդակ: Երբ յուրաքանչյուր վանդակում դնում էր մեկական դեղձանիկ, 1 դեղձանիկ մնում էր առանց վանդակի, իսկ երբ դնում էր երկուական դեղձանիկ, 4 վանդակ ավելանում էր: Արմենը քանի՞ դեղձանիկ ուներ և քանի՞ վանդակ էր գնել:

6. Շենքի յուրաքանչյուր հարկի բարձրությունը 4մ է: Այդ շենքի 5րդ հարկի հատակին փռված գորգը գետնից ի՞նչ բարձրության վրա է գտնվում:
7. Եթե պապիկը ապրի իր ապրած տարիների կեսը և ևս 1 տարի, ապա կլինի 100 տարեկան: Քանի՞ տարեկան է պապիկը:
8. Արեգը, Դավիթը և Անին ապրում են նույն շենքում: Դավիթն ապրում է 2 հարկ բարձր, քան Արեգը, բայց 4 հարկ ցածր, քան Անին: Ով ո՞ր հարկում է ապրում, եթե Արեգն ապրում է այդ շենքի 3րդ հարկում:
9. Մայրիկը որոշեց իր 3 երեխաներին բաժանել չորսական կոնֆետներ, սակայն նկատեց, որ 2 կոնֆետ պակասում է: Ստիպված յուրաքանչյուրին տվեց 3 կոնֆետ: Քանի՞ կոնֆետ մնաց մայրիկի մոտ:
10. Արմինեն, Գայանեն ու Անին ունեն 40 կոնֆետ: Արմինեն ու Գայանեն ունեն հավասար քանակությամբ, իսկ Անին յուրաքանչյուրից 2 անգամ շատ կոնֆետ: Յուրաքանչյուրը քանի՞ կոնֆետ ունի:



### Հուլիս 2021

1. Կշեռքի մի նժարին դրված է 6 միանման դեղձ, իսկ մյուսին՝ 3 միանման անանաս: Եթե անանասներից մեկը տեղափոխենք դեղձերի մոտ, ապա կշեռքի նժարները կհավասարակշռվեն: Քանի՞ դեղձ է կշռում մեկ անանասը:
2. Տասը հարկանի շենքի 10-րդ հարկում 2 բնակիչ է ապրում, իսկ յուրաքանչյուր նախորդ հարկում՝ վերինի համեմատ 2 բնակիչ ավելի: Քանի՞ բնակիչ է ապրում առաջին հարկում:
3. Թոմն ու Ջերին կանգնած են իրարից 20 քայլ հեռավորության վրա: 10 վայրկյանում Թոմը վազում է 10 քայլ, իսկ Ջերին՝ 8 քայլ: Ի՞նչ հեռավորություն կլինի նրանց միջև 1 րոպե հետո, եթե Թոմը վազում է Ջերիի հետևից, իսկ Ջերին փախչում է:
4. Ընտանիքում կա չորս երեխա՝ երիկը, Մանեն, Գևորգը և Անին: Նրանք 4, 5, 8 և 10 տարեկան են: Անին փոքր է Մանեից: Գևորգի և Անիի տարիքների գումարը պարզ թիվ է, այսինքն՝ գումարը բաժանվում է միայն մեկի և ինքն իրեն: Քանի՞ տարեկան է երիկը:



5. Ալեքն ու Ալեքսը զույգ երեխաներ են, նրանց փոքր եղբայր Լեոն ուղիղ 4 տարի փոքր է նրանցից: Այս տարի մայրիկը նրանց երեքի ծննդյան տոբթերի վրա միասին շարեց 23 հատ մոմ: Լեոն քանի՞ տարեկան դարձավ:
6. Գործարանի շուրջօրյա (24 ժամ) հսկողությունն ապահովելու համար հավասաչափ աշխատում են 6 պահակներ: Շաբաթական քանի՞ ժամ է աշխատում յուրաքանչյուրը, եթե միաժամանակ հերթապահում են 2 պահակ:
7. Մաթեմատիկայի մայիսի ֆլեշմոբը մեկնարկեց մայիսի 26-ին, ժամը՝ 19:00-ին և ավարտվեց մայիսի 30-ին (օրվա վերջ): Որքա՞ն տևեց:
8. Տատիկին գաթա թխելու համար անհրաժեշտ էր 100 գրամ շաքարավազ, 150 գրամ ալյուր և հավասար քանակությամբ սոդա ու վանիլ: Քանի՞ գրամ վանիլ էր անհրաժեշտ, եթե բոլոր պարագաները միասին 300 գրամ էին:
9. Մեկ բաժին մրգային աղցան պատրաստելու համար անհրաժեշտ էր 2 խնձոր, 1 բանան, 5 ելակ և 7 կեռաս: Յուրաքանչյուր մրգից քանի՞ հատ էր անհրաժեշտ Աննային, որպեսզի իր և երկու ընկերուհիների համար նույն աղցանից պատրաստի:
10. Մայրիկը լվացքի մեքենայում 9 զույգ տարբեր գույնի գուլպա լվաց: Մայրիկը, լվացքն ավարտվելուց հետո, առանց նայելու ամենաքիչը քանի՞ գուլպա պետք է մեքենայից հանի, որպեսզի դրանց մեջ գոնե մեկ զույգ գուլպա ամբողջանա:

### Պատասխաններ

#### *Օգոստոս 2020*

1. 38
2. 10
3. 20
4. 127
5. 6
6. 3
7. 3
8. 15
9. 7
10. 21

### *Մեկտեմբեր 2020*

1. Ս
2. 16
3. Երկուշաբթի
4. 28
5. 22
6.  $1+2+3+4+5+6+7+8*9$
7. 5,60
8. 3
9. 2 խաչասարդ, 3 բզեզ
10. Եվան

### *Հոկտեմբեր 2020*

1. 3
2. 24 լուրիկ, 16 վարունգ, 8 պղպեղ
3. 20
4. 0
5. 13-րդ
6. 42
7. 14
8. 2
9. 111-1
10. 2022

### *Նոյեմբեր 2020*

1. 13
2. 14
3. 5
4. 5
5. 6 սագ և 8 ձի
6.  $222:2=11$
7. Բագուկը
8. 38մ
9. 4կգ միս և 8կգ ձավար
10. 1500

### *Դեկտեմբեր 2020*

1. 8
2. 9
3. 2
4. 10
5. 300
6. Նապաստակ
7. 14
8. 1500, 3000
9. Կապույտ
10. 5

### *Հունվար 2021*

1. 58
2. 11:50
3. Հինգշաբթի
4. 125
5. 2
6. 4 կամ 5
7. 50
8. 6
9. 14 և 16
10. 6

### *Փետրվար 2021*

1. 4
2. 5
3. 5
4. 20
5. 48
6. Քաջ Նազարը
7. 5
8. 11:20
9. 3
10. Մաքսիմը

### *Մարտ 2021*

1. 8-րդ
2. 21
3. 3
4. 9
5. 10 կամ 12
6. 12 կգ բրինձ, 2 կգ չամիչ
7. Չնձաղիկ
8. 4
9. մարտի 21-ին
10. 89

### *Ապրիլ 2021*

1. 11 բաղ և 16 հավ
2. 3
3. առաջինում 12, երկրորդում 8
4. 31
5. 3
6. 0
7. Ուրբաթ
8. 18
9. 200
10. 500

### *Մայիս 2021*

1. 9:20
2. 7
3. 8 կամ 9
4. 9
5. 5
6. 38
7. 4ժամ 50րոպե
8. Կիրակի
9. Կանաչ
10. 10

### *Հունիս 2021*

1. (11, 12, 1, 2), (9, 10, 3, 4), (7, 8, 5, 6)
2. 13
3. Հավասար
4. Ալեն, Արեգ, Դավիթ
5. 10 դեղձանիկ, 9 վանդակ
6. 16
7. 66
8. Արեգը՝ 3-րդ, Դավիթը՝ 5-րդ, Անին՝ 9-րդ
9. 1
10. Անին՝ 20, Արմինեն և Գայանեն՝ 10-ական

### *Հուլիս 2021*

1. 6
2. 20
3. 8
4. 4
5. 5
6. 56
7. 101 ժամ կամ 4 օր 5 ժամ
8. 25
9. 6 խնձոր, 3 բանան, 15 ելակ, 21 կեռաս
10. 10